Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 21-ի N 784 - Ն որոշման

ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական օժանդակություն տրամադրող մարմինների կողմից պետական օժանդակության տրամադրումից հետո տրամադրված պետական օժանդակության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) տեղեկատվություն ներկայացնելու կարգին ու ժամկետներին առնչվող իրավահարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն նույն նշանակությունը, ինչ նշանակությամբ դրանք օգտագործվում են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում (այսուհետ՝ օրենք):

3. Սույն կարգի իմաստով պետական օժանդակության տրամադրման պահ է համարվում պետական օժանդակություն տրամադրող մարմնի կողմից պետական օժանդակություն ստացողին պետական օժանդակություն տրամադրելու նպատակով ընդունված համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրը կամ պետական օժանդակության տրամադրման գործողության կատարման օրը, եթե պետական օժանդակության տրամադրման համար իրավական ակտի ընդունում չի պահանջվում:

4. Պետական օժանդակություն տրամադրող մարմինները պարտավոր են պետական օժանդակության տրամադրումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողով ներկայացնել տրամադրված պետական օժանդակության վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի N 784 -Ն որոշման N 2 հավելվածի:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ տրամադրվող պետական օժանդակությունների վերաբերյալ սույն կարգով սահմանված տեղեկատվությունը հանձնաժողով է ներկայացնում այն պետական մարմինը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացրել համապատասխան պետական օժանդակության տրամադրման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

6. Պետական օժանդակություն տրամադրող մարմինները սույն կարգի 4-րդ կետով պահանջված տեղեկատվությունը (այսուհետ՝ տեղեկատվություն) հանձնաժողով են ներկայացնում էլեկտրոնային տարբերակով՝ պատշաճ վավերացված ձևով՝ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի կամ այլ համակարգով (այսուհետ՝ համակարգ), իսկ համակարգի բացակայության դեպքում՝ թղթային տարբերակով՝ պատշաճ վավերացված ձևով՝ կցելով էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը): Եթե տեղեկատվությունը պարունակում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի իմաստով պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, ապա ներկայացվում է օրենքով սահմանված կարգով՝ թղթային տարբերակով:

7. Եթե տեղեկատվությունը պարունակում է օրենքով սահմանված կարգով պահպանման ենթակա գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, ապա պետական օժանդակություն տրամադրող մարմինը դրա մասին համապատասխան նշում է կատարում՝ մատնանշելով տեղեկատվությունը որպես գաղտնիք դիտարկելու իրավական հիմքը:

8. Հանձնաժողովն իրավասու է պետական օժանդակություն տրամադրող մարմնից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն կամ պարզաբանում, եթե ներկայացված տեղեկատվությունն ամբողջական չէ կամ, եթե առկա են հակասություններ հանձնաժողովի մոտ առկա տեղեկատվության և պետական օժանդակություն տրամադրող մարմնի կողմից ներկայացված տեղեկատվության միջև, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքե-

րում: Պետական օժանդակություն տրամադրող մարմինները պարտավոր են հանձնաժողովին ներկայացնել լրացուցիչ տեղեկատվությունը կամ պարզաբանումը՝ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով:

9. Եթե պետական օժանդակություն տրամադրող մարմինը տրամադրվող պետական օժանդակության չափի կամ արժեքի վերաբերյալ հստակ ցուցանիշ չունի, ապա կարող է ներկայացնել մոտավոր ցուցանիշ՝ նշում կատարելով այն մասին, որ այդ ցուցանիշը մոտավոր է:

10. Պետական օժանդակություն տրամադրող մարմինը և դրա պաշտոնատար անձն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում տեղեկատվության չներկայացման կամ ներկայացված տեղեկատվության ոչ հավաստի կամ ոչ ամբողջական լինելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ